ՎԱՆԱՅ ԻՇԽԱՆԻ (ՆԻԿՈԼ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ) ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՒԸ

ԱՐԵՒԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ
arevikmeliqyan@gmail.com

Սարդարապատի Հերոսամարտի յուշահամալիր, Հայոց Ազգագրութեան եւ Ազատագրական Պայքարի Պատմութեան Ազգային Թանգարանի (ՀԱԹ) «Փաստաթուղթ» ֆոնդում պահւում են Հայոց Ցեղասպանութեան զոհ դարձած՝ ՀՅԴ ականաւոր գործիչ, կազմակերպիչ, մարտիկ, գրող Նիկոլ Միքայէլեանի արխիւային նիւթերը[1]: Այն պարունակում է նամակներ (7), փաստաթղթեր, վկայականներ (15), տեղեկանքներ, նոթատետրեր, նրա գծած Վանի քարտէզը, նաեւ այլ փաստաթղթեր: Միքայէլեանի մասին հրատարակուել են ուսումնասիրութիւններ, գրուել են յօդուածներ: Այստեղ, արխիւային այս հաւաքածուի շրջանակներում կը լուսաբանենք հերոսի կեանքի որոշակի դրուագներ, որը կը լինի իւրայատուկ տուրք հերոսի մահուան 101ամեակի առթիւ, ինչպէս նաեւ կը հանրահռչակենք թանգարանի հաւաքածուն:

Նիկոլ Միքայելեանը ծնուել է 1882ին Ղարաբաղի Քռասնի[2] գիւղում: Նա Միքայէլի եւ Մինայի որդին էր: Սկզբնական կրթութիւնն ստացել է Շուշիի Թեմական Դպրոցում: Նա ընդունակ, սրամիտ սան էր, ուսուցիչների պարծանքը: Նրա ուսումնառութեան տարիները համընկել են օսմանեան բռնապետութեան դէմ հայ ազատագրական զինուած պայքարի վերելքի, հայրենասիրական գաղափարների բուռն խմորումների ժամանակաշրջանի հետ: Թեմականում սովորելու տարիներին մի խումբ առաջադէմ աշակերտների հետ հրատարակել է «Կոկոն» ձեռագիր թերթիկը, որը քարոզել է հայրենասիրական, ազատագրական գաղափարներ: Ըմբոստ պատանին, չտանելով դպրոցի ռեժիմը, ընդհարուել է Բենիկ վարդապետի հետ, հեռացել այնտեղից, մեկնել Երեւան եւ ընդունուել Երեւանի Թեմական Դպրոցը, ուր տիրել է գրեթէ նոյն ռեժիմը:

Նիկոլը, յարելով ազատագրական պայքարի ելած ՀՅԴ կուսակցութեանը, ներգրաւուել է գործող գաղտնի խմբակներում, որոնց նպատակը երիտասարդութեան շրջանում ազգային ինքնագիտակցութեան ձեւաւորումն էր: Կիսատ թողնելով ուսումը 1902ին մեկնել է Կարս, ապա Բասէն (այստեղ նա յայտնի է եղել Գրիգոր անունով): Իր ընկեր Մէնակի (Եգոր Առստամեան) հետ Բասէնի գիւղերում պայքարի է հանել տեղի հայութեանը: Կռուել է նաեւ Խանի (Բարսեղ Թիրաքեանի) եւ Սարգիս Նեւրուզի խմբերի կազմում: Նրա գործունէութեան կարեւոր հանգրուանը Վանն էր:

«*Վաղը ես ճանապարհում եմ դէպի արնոտ երկիր. ո՛չ մի զգացում չի տիրապետում, թէպէտ ես դիմում եմ դէպի զոհերի դամբարանը: Կռուի մեջ (գնդակների) տզվզոցը արդէն հանել է իմ սրտից բոլոր երկիւղի եւ ահու զգացում. ընկերներիս արնաշաղախ դիակները միայն լցրին իմ սիրտը, ոխի եւ արեան ծարաւով*»[3]: Նիկոլը Վան է մեկնել 1903 Հոկտեմբերի 9ին՝ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կոմիտէի առաջադրանքով: Այնտեղ մնացել է 1903-1915՝ մինչեւ իր մահը: Եղել է Լեռնապարի շրջանի դաշնակցական ղեկավար դէմքը՝ ամբողջ նուիրումով առաջնորդել տարածաշրջանի յեղափոխական-կազմակերպչական աշխատանքները, որի համար նա յայտնի է դարձել Վանայ Իշխան անունով: Վանը բանուկ ճանապարհի վրայ էր, որով էլ հայկական զինատար ջոկատները թափանցել են Երկիր, փոխադրել զէնք-զինամթերք: Այն վերածուել էր յեղափոխական գործունէութեան առանցքի, որտեղ կենտրոնացած էին ՀՅԴ գործիչները: Նիկոլի Վան ժամանելուց յետոյ իրենց գործունէութիւնն աշխուժացրին նաեւ տեղացի դաշնակցականները՝ Վահան Փափազեանը (Կոմսը), Թեւոս Տեղտրիկեանը, Ալէս Պարսամեանը, Արմենակ Շալջեանը, Փանոս Ժամհարեանը, Արամ Մանուկեանը, Մալխասը (Արտաշէս Յովսէփեան), Արշակ Վռամեանը: Կոմսը իր յուշերում գրում է. «*Կ. Կ.-ը յանձնարարեց Իշխանին, Կոմսին, Մելոյեանին եւ Ալէսին պատրաստել քաղաքի զինուորական յատակագիծը, ճշդել պահեստներու վայրերը, պաշտպանութեան կէտերը, զէնքերը եւ հաշուի առնել մեր ունեցած կռուողներու քանակն ու որակը, դիրքերու մէջ տեղադրուելիք ուժերը եւ յարձակողական խումբերը...*»[4]: Հաւանաբար, այս յանձնարարութեան արդիւնքում է Իշխանը գծել Վանի քարտէզը: Նա քարտէզն այնպիսի վարպետութեամբ է գծել, որը գրեթէ չի տարբերւում տպագիր քարտէզից: Կապոյտ մատիտով նշել է Վանայ Լիճը, կարմիր ու դեղին գոյներով՝ Վանի Նահանգի, իսկ կարմիր ու կանաչով՝ Պարսկաստանի հետ ունեցող սահմանները: Քարտէզի ձախակողմեան վերեւի հատուածում գծել է Վանի Քաղաքամէջի յատակագիծը՝ պայմանական նշաններով, իսկ ներքեւի ձախ անկիւնում՝ Այգեստանի յատակագիծը: Արեւմտեան Հայաստանի մեծ մասն ընդգրկող քարտէզի վրայ սեւ գոյնի թանաքով տարբեր մեծութեան տառերով նշել է բոլոր տեղանունները[5]: Այս եւ բազմաթիւ այլ առումներով Իշխանի գծած քարտէզը գիտական կարեւոր նշանակութիւն ունի:

Վանում Իշխանի եւ նրա ընկերների նպատակը մէկն էր՝ հայրենիքի փրկութիւնը, սակայն աշխատանքի ընթացքում յաճախ են հակադրուել նրանց տեսակէտները, որի հետեւանքով եղել են նաեւ ընդհարումներ: Ընդհարուող կողմերից մէկը գլխաւորել է Իշխանը, միւսը՝ Կոմսը: Տարաձայնութիւնները չսրելու եւ ստեղծուած դրութիւնից դուրս գալու համար դաշնակցականները կատարել են աշխատանքի բաժանում. Կոմսին թողել են Վանում՝ որպէս ընդհանուր ղեկավար, Արամին՝ նրան

տեղակալ, յանձնարարելով, որ զբաղուի քաղաքի կազմակերպական ու քարոզչութեան հարցերով: Վարդան Շահպազի եւ մակուեցի Մեսրոպի հետ Իշխանը մէկնել է Շատախ, Մոկս, Կարկառ, Կարճկան: Այս առթիւ Կոմսը գրել է. «Զինուորական մեր գործողութիւններու ղեկավարութիւնը քաղաքին մէջ յանձնուեցաւ Իշխանին, բայց անոր սիրտը տաք չէր քաղաքին վրայ. կ'առարկէր թէ անծանօթ է քաղաքի տեղագրութեան եւ պնդեց, իր հրաժարման վրայ, թէեւ ծրագրի պատրաստութեան մէջ ունեցաւ իր կարեւոր դերը: Արհեստով զինուորական չէր, բայց բնազդներով եւ հակումներով զինուորական յեղափոխական մարտիկ էր իրապէս: Իշխանը իր խումբով շուտով անցաւ Լեռնապարի շրջանը, կազմակերպելու այնտեղի գաւառներու ինքնապաշտպանութիւնը»[6]: Նկատելի է, որ Վանում Իշխանին յաջողուել է Վասպուրականի յեղափոխական գործունէութիւնը վերափոխել՝ ծանրութեան կենտրոնը դարձնելով գիւղացիութեանը եւ զինուորականութեանը:

Իշխանը գաւառներում իր ճարտասանութեամբ եւ գեղեցիկ քարոզներով հմայել ու հնազանդեցրել է ժողովրդին, հաւաքել դաշնակցութեան դրօշի ներքոյ, ընտրել կոմիտէներ, կազմել զինական եւ մարտական խմբեր՝ քաջ ու անվեհեր մարտիկներով: Նրա զինուորներն ընտրովի էին. ծայրաստիճան ճշտապահ, կարգապահ, ընկերասէր: Իշխանը սիրել է իր զինուորներին եւ սիրուել նրանց կողմից: Նա իր խիստ գործունէութեան շնորհիւ զինուորների մէջ մտցրել էր երկաթեայ օրէնքներ, կարգ ու կանոն: Ինչպէս, օրինակ, Խիզանում նա հայութեան ըմբոստ ոգին պահելու նպատակով կոչ է արել՝ չենթարկուել եւ տուրք չվճարել քրդերին: Կարճկանում ընկած էր հայութեան դիմադրութեան ոգին, նրան յաջողուել է նաեւ ոտքի հանել այդ գաւառը:

Վանում Իշխանը զբաղւում էր նաեւ մշակութային եւ հասարակական գործունէութեամբ: Մասնաւորապէս, փաստերը վկայում են, որ նա քաղաքում ստեղծել է երգչախումբ եւ թատերախումբ, որտեղ երգել է (ունէր լաւ ձայն), իսկ ազատ ժամանակ զբաղուել է թատերական ներկայացումներով: Վերջինիս ջանքերով հիմնուել է նաեւ տպարան, որտեղ 1910 Նոյեմբերի 7ին սկսել է հրատակել *Աշխատանք* շաբաթաթերթը՝ լինելով նրա խմբագիրը: Այդ մասին վկայում է թանգարանում գտնուող արխիւային հաւաքածուում պահուող այցետոմսի վրայ գրուած է. «Իշխան տնօրէն խմբագիր Աշխատանքի»[7]: Թերթը մեծ գործ է կատարել շրջանի հասարակական կեանքի մէջ: Այն սոսկ տպարան չէր, այնտեղ տեղի են ունեցել կուսակցական ժողովներ ու ժողովրդական հաւաքներ: Այդ գեղեցիկ շէնքն ունէր հարուստ գրադարան, որը կոչուել է «Ազատութեան Լոյս»[8]: Իշխանը միաժամանակ աշխատակցել է *Դրօշակ*ին եւ ԱՄՆում լոյս տեսնող *Հայրենիք*ին:

Իշխանը եռանդուն գործունէութիւն է ծաւալել տարբեր ոլորտներում: Փաստաթղթերից մէկում նա իր անհանգստութիւնն է յայտնում

Արտամետում մեդրեսէ կառուցելու նախագծի առիթով եւ առաջարկում է մեդրեսէն կառուցելու համար անհրաժեշտ նախատեսուած շինանիւթերը փոխարինել տեղական հումքով: Ներկայացնում է ութ կէտից բաղկացած շինանիւթերի փոփոխութիւնների մասին ցանկը եւ եզրակացնում, որ շինութիւնը գլուխ կը գայ, եթէ իրականացուեն նշուած փոփոխութիւնները[9]:

Արխիւային հաւաքածուում մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում նամակները, որոնք սովորաբար գրուել են դէպքերի անմիջական ազդեցութեան տակ, հետեւապէս պարունակում են հաւաստի տեղեկատուութիւններ: Դրանց վրայ նշուած են նաեւ տարեթուեր, ամսաթուեր, վայրեր եւ դրուած են ստորագրութիւններ: Հաւաքածուում նամակների մի մասն ուղղուած է հօրը՝ Միքայէլին, քրոջը՝ Շուշանիկին: Պահպանուած է նաեւ հօր կողմից գրուած նամակը: Կայ Իշխանի ընկերոջ՝ Յաբէթ Կեսարեանի նամակը՝ ուղղուած Արամին եւ Իշխանին:

1914 Մայիսի 11ի նամակը Իշխանը գրել է Վանից: Նամակը կրում է «Իմ թշուառացած եւ խեղճ հայր» վերնագիրը: Նամակի շարադրանքը յագեցած է անսահման սիրով եւ կարօտով: Հայրը ապրել է Քռասնի գիւղում, որտեղ մինչ օրս պահպանուել է Իշխանի հայրական տունը: Հայրը անգրագէտ էր, բայց շատ հարուստ, զբաղուել է առեւտրով: Իշխանը նրա երրորդ որդին էր, իսկ առաջին երկուսին կորցրել էր, որի պատճառով հայրը վշտացած էր: Որդին նամակում փորձել է մխիթարել հօրը՝ գրելով. «*Ստացայ քո նամակդ գրուած արիւնով եւ արտասուքով: Քեզ մխիթարելու համար լեզուս անզօր է, այն լեզուն, որ հազարաւոր մխիթարել է իմացել... Դժբախտութեան մէջ մարդ աւելի պիտի քաջանայ, պիտի աշխատէ իւր ուժերը հաւաքել, թէ չէ ինքն էլ զոհ կփերթայ, կը ոչնչանայ*»[10]: Իշխանը նամակում գրել է, որ 12 տարի առաջ հեռացել է իր ծննդավայրից եւ տենչացել է տուն վերադառնալ, «համբուրել հօր ալեզարդ ճակատը»: Նամակում նա խնդրել է հօրը հոգ տանել իր առողջութեան եւ տեղեկացնել, թէ ինչ կարիքներ ու խնդիրներ նա ունի, որպէսզի կարողանայ օգնել: Որդին մտահոգութիւն է յայտնել նաեւ, որ մօր ու քրոջ մասին քիչ է տեղեկացուած՝ խնդրելով հօրը յաճախակի նամակներ գրել. «*Է՛հ հայր իմ կտրիչ կաց, լաւ պահիր քեզ. առողջութեանդ հոգ տար... չէ որ դու դեռ ունիս Շուշանիկը, Իշխանը, եւ իմ փոքրիկ Հանրին...*»[11]: Իշխանը անսահման ուրախութիւն է ապրել, երբ տեսել է հօր ձեռագիր նամակը. «*Հայր իմ քո գիրդ տեսա ձեռքովդ ստորագրած, շատոնց էր չէի տեսել համբուրեցի, համբուրեցի, մինչեւ ջնջուեց...*», եւ խնդրել է առանց պատասխանի սպասելու՝ շաբաթը մէկ նամակ գրել[12]: 1914 Յունիսի 27ի նամակով (որը վերնագրել է «Սիրելի հայր իմ»), գրել է, որ ստացել է միանգամից երկու նամակ, ուրախ է, որ տանեցիները ողջ եւ առողջ են, խոստանում է գիւղ գալ, բայց կինը «ծոցուոր» է եւ «*կը սպասեմ ազատուի եւ առողջ կերպով ոտքի կանգնի որպէսզի ես էլ գամ*»:[13] Նա

հօրը պատուիրել է հողային աշխատանքներում շատ չչարչարուի, լաւ կը լինի, որ մի ձի եւ մի կով պահի, իսկ մնացածը վաճառի եւ հանգիստ ապրի: Իշխանը նամակով բարեւներ է ուղարկել իր վաղեմի ծանօթներին ու ազգականներին՝ Ղարախան եւ Սարգիս ամիներին, Պետրոսին, Աւետիս Առստամեանին, Ղարախան ամու Գրիգորին, Սողոմոնին եւ բոլոր այն գիւղացիներին, որոնք յիշում են իրեն: Նրան հետաքրքիր է իրենց հին տունը կա՞յ, թէ՞ նորն են շինել, իրենց այգին ծախե՞լ են, թէ՞ կայ, իր տնկած ծառերը մեծացե՞լ են, թէ՞ քանդել են[14]:

Իշխանը նամակներ է գրել քրոջը՝ Շուշանիկին, որը ամուսնացած էր Հայրապետի հետ եւ ունէր երկու զաւակ՝ Գուրգէն եւ Վաղարշակ: 1914 Մայիս 12ի՝ «Իմ սիրելի եւ պաշտելի քոյրիկս» վերնագրով նամակում ծնողասէր որդին խնդրել է քրոջը հոգ տանել հօր, մինչեւ ինքը կը վերադառնայ. «*...իմ ազիզ Շուշանի՛կ, ես հեռու եմ հօրից, շատ հեռու, մնացել ես միայն դու. դու նրան պահապան հրեշտակը պիտի լինես մինչեւ ես կը գամ... Դէ՛հ Շուշանիկ ջան, մեր հօր դառնացած խորտակուած սիրտը մինք պիտի քաղցրացնենք, իսկ մինչեւ այդ դու պիտի լինես եւ իմ փոխանորդը....Ամէն իրիկուն առաւօտ պիտի գնաս նայես, պահես պահպանես*»[15]:

Նամակների թւում է Իշխանի հօր նամակը: Նա գրել է որդուն անհուն կարօտով եւ սպասումով, անհանգստացած է, նրանց ուշանալու համար, երեւի պատերազմն է պատճառը եւ անհամբեր պատասխանի է սպասում: Նամակում նա յայտնել է, որ Շուշանիկի ամուսնուն պատերազմ են տարել: Հաղորդել է նաեւ կնոջ ջերմագին բարեւները:

Այս նամակները խօսուն վկաներ են, որ Իշխանը անցնելով ազատագրական պայքարի դժուարին ուղիներով ու ծանր փորձութիւններով, այնուամենայնիւ պահպանել էր իր մարդկային էութիւնը, հոգու ջերմութիւնը եւ նրբանկատութիւնը:

Շուշիի Թեմական Դպրոցում սովորելու տարիներին Իշխանը ծանօթացել է Արամ Մանուկեանին, որը նրանից միքանի տարով էր մեծ: Նրա գործուն մասնակցութեամբ Իշխանն առաջին անգամ ներգրաւուել է յեղափոխական խմբերի մէջ: Արամը մեծ հեղինակութիւն է եղել Իշխանի համար եւ համարուել է նրա ուսուցիչ ընկերը: Երկու ընկերների մասին հայ ազատագրական պայքարի մեծագոյն դէմքերից մէկը՝ Ռուբէն Տէր-Մինասեանը իր՝ *Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները* աշխատութեան մեջ, հետաքրքիր համեմատական է անցկացրել. «*Իշխանը ոգին էր Լեռնապարի, իսկ Արամը՝ Վանի: Ոգին քարիւղի նման ունի իր տեսակները. թեթեւ եւ ծանր, մէկը՝ պայթուցիկ, չոր, Իշխանի նման, միւսը՝ ծանր եւ իւղոտ, Արամի նման, որ միշտ վառում է առանց պայթունի*»: Ըստ նրա՝ «*Իշխանը ժառանգորդն է Նիկոլ Դումանի, Արամը՝ Վարդանի: Իշխանը սահմանադրական միապետութիւն է, իսկ Արամը՝ ռամկավարութիւն, երկուքն ալ նոյնը՝ տարբեր ձեւերով, նոյն*

նպատակներով եւ ցանկութիւններով, բայց հակառակ մեթոդներով. երկուքն ալ ինծի գրաւիչ»[16]:

Նրանք միասին են գործել նաեւ Վանում: 1914 Ապրիլի 15ին Կոստանդնուպոլսից Ղարիբ Կեսերեանի նամակն ուղղուած է երկու ընկերներին: Նամակի հեղինակը զբաղուած լինելու պատճառով երկար ժամանակ չի կարողացել նամակ գրել, բայց հաւաստիացնում է, որ չի մոռացել նրանց, չի մոռացել Վանում անցկացրած այն տարիները, որոնք մնացին որպէս քաղցր յիշողութիւններ: Գրել է նաեւ, որ շուտ-շուտ տեսնում է Վռամեան էֆենդուն եւ երեկ նորից միասին են եղել: Կեսերեանը խնդրել է շուտ-շուտ նամակ գրեն, որով ինքը կը վստահանայ, որ իրեն չեն մոռացել[17]:

1910ին Իշխանը Վանում ծանօթացել է ապագայ կնոջ՝ Սիրանուշի հետ, որը Վանի Օրիորդաց Վարժարանի շրջանաւարտ էր (1900-1909): Նա աչքի է ընկել բարձր վարքով եւ աշխատասիրութեամբ, վարժարանի իննամեայ դասընթացն աւարտելով ստացել էր աւարտական վկայական[18]: Սիրանուշի հետ հանդիպման մասին կան գրանցումներ Իշխանի յուշատետրում, որտեղ ժամանակագրական սկզբունքով արուած են նշումներ: Առաջին նշումը թուագրուած է՝ «7 Յունուար, 1910 թ.», «Սիրանոյշին տեսայ», յաջորդ թուագրումը՝ «16 Յունուար, 1910 թ.», «Սիրանոյշին նամակ ղրկեցի»: Նամակագրութիւնը նրանց միջեւ շարունակուել է մինչեւ Ապրիլ եւ նոյն ամսի 13ին գրել է. «Սիրանոյշի հետ իրաւ տեսնուեցայ եւ մատանի տուի վերջապէս», իսկ Ապրիլի 20ին նշանուել են[19]: 1915 Յունիսի 6ի *Աշխատանք* թերթում (Վան, Ե. Տարի, թիւ 22-22) Հայկազունիի հեղինակութեամբ տպագրուած է «Իշխանի հարսանիքը» վերնագրով յօդուածը, որտեղ նշւում է, որ նրանց պսակադրութեան արարողութիւնը տեղի է ունեցել 1910ի ամռանը՝ «*Վարագայ լեռնահովիտներու մեջ կառուցած Ս. Գրիգորի մենաստանի մէջ*»: Հեղինակը նկարագրել է պսակադրութեան արարողութիւնը, նշելով, որ կեանքում երբեք չարտասուող անվեհեր յեղափոխական փեսան աչքերը տաճարի բարձունքին յառած լուռ ու մունջ արտասուել է: Հետաքրքիր է նաեւ Իշխանի բաժակաճառը. «*Երա՞զ է սա թէ իրականութիւն՝ ինքս էլ կարող չեմ հասկնալ: Ա՛յ լեռներ, դու՛ք, որ ականատես եղաք բոլոր գաղափարակիցներիս քաշած տառապանքներին, այժմ ձեզ նայելով, որքա՜ն քաղցր ու դառն յիշատակներ գալիս զարթնում են սրտիս մեջ ... Այժմ ձեր հովիտներում իմ հարսանիքն է կատարւում, սիրելի ընկերներիս մասնակցութեամբ: Բաժակս կը խմեմ մեծ իդէալի իրականացման համար նահատակուած բոլոր ընկերներիս անմահ յիշատակին, իսկ ձեզ էլ պարոններ, յայտնում եմ խորին շնորհակալութիւն*»[20]:

Իշխանը նուիրուած եւ հոգատար ամուսին էր: Արխուում պահուող *Գեղարուեստ* գրական, գեղարուեստական, երաժշտական

պատկերազարդ հանդէսի 01. 03. 1908 առաջին համարի առաջին էջի վերեւի ձախ անկիւնում Իշխանի գրութիւնն է. «Սիրանուշին, որ կարդայ եւ խելօք աղջիկ դառնայ»[21]: Այս գրութիւնը կարդալով կարելի է ենթադրել, որ վերջինս մտահոգ է եղել կնոջ գեղագիտական զարգացման համար: Նրանք ունեցել են երկու զաւակ՝ Հենրիկը եւ Մինան: Մինան դեռ չծնուած, Իշխանը մահացել է:

Դաժան ճակատագիր էր բաժին ընկել Իշխանին եւ նրա ընտանիքին: Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական իշխանութիւնները իրենց դիւային ծրագիրը իրականացնելու համար արհեստականօրէն հրահրել են հայ-քրդական ընդհարումներ: 1915ին նրանց յաջողուեց ոտքի հանել Շատախի շրջանի քրդերին: Տեղի ունեցան արիւնահեղ բախումներ քուրդ աշիրէթների եւ հայկական խմբերի միջեւ: Մարտի վերջին Վանի կուսակալ Ջեւդէթ փաշայի հրամանով ձերբակալւում է Շատախի Գաւառի դաշնակցական ղեկավարներից մէկը՝ Յովսէփ Չոլոյեանը, որը միքանի օրից բանտում սպանուել է: Ջեւդէթ փաշան խնդիրը «խաղաղ» կարգաւորելու համար Արամ Մանուկեանին առաջարկել է Իշխանին ուղարկել եւ տեղում հարցերը քննել ու պարզաբանել: Առաջին հայեացքից այս առաջարկը տեղին էր թւում: Իշխանը հեղինակութիւն էր վայելում թէ՛ քրդերի եւ թէ՛ թուրքերի շրջանում, ուստի կարող էր ստանձնել այդ պարտականութիւնը, բայց դրա տակ թաքնուած էր դաւադրութիւն: Ընդունելով առաջարկը՝ Իշխանն իր ընկերների հետ ոստիկանական ջոկատի եւ թուրք ոստիկանապետի ուղեկցութեամբ ուղեւորուել է Շատախ՝ այդ հարցը կարգաւորելու: Գիշերելու համար կանգ են առել քրդական Հիրճ Գիւղում՝ Իշխանի բարեկամի տանը, որտեղ էլ կատարուել է ոճրագործութիւնը: Վանի կուսակալ Ջեւդէթի ուղարկած չերքէզ մարդասպաններն 1915 Ապրիլի 3ի գիշերը խուժել են այդ տուն եւ սպանել Իշխանին ու նրա ընկերներին:

Ապրիլի սկզբին թուրքական տասը հազարանոց զօրքը պաշարեց Վանը: Միակ ելքը մնում էր պայքարը: Իշխանի մահը միաւորել էր Վանի ողջ հայութեանը. նրանք ոտքի կանգնեցին: Վանի ժողովուրդը գիտակցեց, որ զէնքը ձեռքին պաշտպանուելուց բացի ուրիշ միջոց չկայ: Մէկամսեայ գոյամարտը պսակուեց հայերի յաղթանակով: Այդ յաղթանակը արդիւնք էր տարիներով կատարուած քրտնաջան յեղափոխական աշխատանքի, որի մէջ իր ներդրումն ունէր նաեւ Իշխանը: Վանի կուսակալ Ջեւդէթի ուժերը տեղի տալով նահանջեցին: Ռուսական բանակի առաջապահը հայ կամաւորական 2րդ խմբի հետ մտաւ Վան: Հայ կամաւորների գործուն աջակցութեամբ յաջողուել է գտնել Իշխանի եւ նրա ընկերերի դիակները, որոնք 1915 Մայիսի 19ին տեղափոխուել են Վանի պանթէոն, ուր եւ կատարուել է նրանց յուղարկաւորութիւնը: Ներկայ են եղել նաեւ քաղաքի նահանգապետ Արամ Մանուկեանը, հրամանատար Սարգիս Մեհրաբեանը (Խանասորի Վարդան), խմբապետ

Համազասպ Սրուանձտեանը, Կոստի Համբարձումեանը, Սարգիս Արարատեանը: Հնչել են եկեղեցական շարականներ, մարտական երաժշտութիւն՝ Վանի հերոսամարտի նուագախումբի կատարմամբ, իսկ զինուորները կատարել են Իշխանի երգը:

Իշխանի մահից յետոյ, Վանի նահանջի ժամանակ նրա կինը՝ Սիրանուշը որդու հետ (աղջիկը մահանում է գաղթի ճանապարհին՝ Իգդիրում) գալիս է նախ Արցախ, ապա՝ Երեւան: Ընտանիքի ողջ ծանրութիւնն իր ուսերին կրելով՝ նա 1920ականներին անցնում է աշխատանքի Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէի թիւ 2 ճաշարանում[22], ապա՝ ամերիկեան բուժարանում որպէս գրագիր, կարի արհեստանոցում[23], շերամապահական կայանում (1926-1927)[24], ծխախոտի կրպակում (1927-1928)[25], ԲԱՆԿՈՊում (Երեւանի կենտրոնական բանուորական կոոպերատիւ) (1929-1931)[26]: Սիրանուշը որդուն կրթութեան է տալիս, ամուսնացնում, հոգ տանում թոռներին: Իշխանի եւ Սիրանուշի սերունդներն այժմ ապրում են Երեւանում, որոնց հետ թանգարանը պահպանում է մշտական կապ:

Իշխանի մահից մէկ տարի յետոյ՝ 1916ին Հայկ Աճէմեանի նախաձեռնութեամբ լոյս է տեսել նրա մասին պատմող *Սգոյ Պսակ Իշխանի* գրքոյկը[27]: Գրքոյկի լոյս ընծայման մասին պատմող նամակը՝ «Յարգելի տիկին Սիրանոյշ» վերնագրով պահպանւում է արխիւային հաւաքածուում: Նամակում հեղինակը գրում է, որ վերջապէս լոյս տեսաւ գրքոյկը, որը մեծ ընդունելութիւն գտաւ, բաւականին ծախուեց, «*բայց ափսոս, որ քիչ տպագրեցինք, հազիւ ծախսը կը գոցէ*»: Հեղինակը գրում է, որ մէկ օրինակ կ'ուղարկի Սիրանուշին, իսկ մէկն էլ՝ Իշխանի հօրը: Գրքոյկը ընդգրկում է նրա մասին գրուած բանաստեղծութիւններ, յօդուածներ, հաղորդումներ, նաեւ՝ Իշխանի բանաստեղծութիւնները: Այն գտնւում է թանգարանի փաստաթղթերի հաւաքածուում:

Իշխանի արխիւային նիւթերի ուսումնասիրութիւնը մեզ բերում է այն համոզման, որ անհատները չափազանց մեծ դերակատարութիւն ունենում պատմութեան մէջ եւ նրանց կեանքի օրինակը ուսուցողական է ինչպէս մատաղ սերունդի դաստիարակութեան տեսանկիւնից, այնպէս էլ պատմաքաղաքական հանգամանքների կրկնուելու առումով: Իշխանի արխիւը լոյս է սփռում ժամանակի պատմական եւ քաղաքական իրադարձութիւնների վրայ, որոնք կարօտ են յետագայ աւելի խորը ուսումնասիրութեան:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ն. Միքայէլեանի արխիւային նիւթերը 1987 Մարտի 25ին թանգարանին է յանձնել նրա հարսը՝ Սաթենիկ Աղասու Գալոյեանը: Հաւաքածուն զետեղուած է նաեւ Վահէ Թաշճեանի *Իշխան*, Երեւան, Տպ. Մ. Վարդանեան, 1994:

[2] Քռասնի - գիւղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ասկերանի շրջանում, Ստեփանակերտ քաղաքից 10 կմ. հարաւ-արեւելք, Բաղիրխան Լեռան հիւսիսային ստորոտում (*Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 5*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2001, էջ 439):
[3] ՀԱՊԹ6739/Փ224/6:
[4] Վահան Փափազեան, *Իմ Իշերը, Հտր. 1*, Բոստոն, Տպ. Հայրենիք, 1950, էջ 504:
[5] ՀԱԹ 6739 /Փ 224 /1:
[6] Փափազեան, էջ 504:
[7]ՀԱԹ/Փ224/6739/:
[8] Թաշճեան, էջ 136:
[9] ՀԱԹ 6739 /Փ 224 /36:
[10] ՀԱԹ 6 739 /Փ 224 /17:
[11] Նոյն:
[12] Նոյն:
[13] ՀԱԹ 6739 /Փ 224 /18:
[14] Նոյն, ՀԱԹ 6739 /Փ 224 /18:
[15] ՀԱՊԹ 6739/ Փ 224 /7:
[16] Ռուբէն, *Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները, Հտր. 5*, Թեհրան, «Ադանա», 1982, էջ 233:
[17] ՀԱԹ 6739/ Փ 224 /38:
[18] ՀԱԹ Փ224/6739/ 24:
[19] ՀԱԹ 6739/ Փ 224 /9:
[20] Թաշճեան, էջ 233-234:
[21] ՀԱԹ 6739/ Փ 224 /4:
[22] ՀԱԹ Փ224/ 6739/ 40:
[23] ՀԱԹ Փ224/ 6739/ 21:
[24] ՀԱԹ Փ224/ 6739/23, / 26:
[25] ՀԱԹ Փ224/ 6739/25:
[26] ՀԱԹ Փ224/ 6739/22:
[27] Տպ. «Ն. Աղանեանի» , 51 էջ:

NIGOL MIKAYELIAN'S (AKA VANA ISHKHAN) PERSONAL ARCHIVE
(Summary)

AREVIK MELIQYAN
arevikmeliqyan@gmail.com

A victim of the Armenian Genocide, prominent member activist, organizer and fighter of the Dashnak Party, Nigol Mikayelian (aka Vana Ishkhan), has been very active in the reviolutionary activities of the Van-Vasburagan region.

The paper assesses the contents of Nigol Mikayelian's archive, which was recently donated to the Sardarabad Museum of Armenian Ethnography and Liberation Struggle. These documents shed further light on the revolutionary life of Mikayelian and the historical and political conditions he lived in.